

ԳԵՐԱԾՆՈՐՀ Տ. ԲԱԲԳԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԵՊԱՏՅԱՆ

Նորապսակ Տ. Բաբգեն եպիսկոպոսը, ավազանի անունով Հովսեփ, ընիկ անթաբցի ծնողների զավակ, ծնվել է 1918 թվականի դեկտեմբերին, տարագրության ճանապարհի վրա։

1920 թվականին ծնողների հետ հաստատվում է վերջնականապես Հալեպ քաղաքում, և իր նախնական կրթությունը ստանում է Հալեպի անթաբցիների հանրածանոթ Կրթասիրաց երկսեռ վարժարանում։

1932 թվականին փայլուն կերպով ավարտում է դպրոցը և նույն տարվա սեպտեմբերին ընդունվում է Երուսաղեմի ժառանգավորաց վարժարանը։

Ուսանողության տարիներին նա աչքի է ընկնում իր ջանասիրությամբ, կարգապահությամբ, և սիրվում բոլոր դասախոսներից, որպես համեստ և աղնիվ ուսանող։

1936 թվականին հաջող կերպով ավարտում է ժառանգավորաց վարժարանի քառամյա դասարանական բաժինը և 11 ընկերների հետ սարկավագ է ձեռնադրվում հոգելույս Տ. Թորգոմ պատրիարքից ու ընդմիշտ իր կյանքն ու գործունեությունը կապում Ս. Երուսաղեմի միաբանության հետ։

Հովսեփ սարկավագը եղել է միշտ իր դասարանի ուսման գերազանցիկներից մեկը և առաջինը իր վարք ու բարքով։

1939 թվականին ավարտելով ընծայարանի եռամյա դասընթացը, հոգելույս Տ. Մեսրոպ պատրիարքից ձեռնադրվում է կուսակրոն քահանա, և Ս. Աթոռից ներս, հակառակ իր շատ երիտասարդ տարիքին, կոչվում է պատասխանատու վարչական-վանական պաշտոնների։

1940—1942 թվականներին նշանակվում է Երուսաղեմի Ս. Աթոռի Ելևմտից տեսուչ։ 1943—1948 թվականներին ձեռնհասորեն վարում է Յաֆայի հայոց Ս. Նիկողայոս և Ռամլեի հայոց Ս. Գևորգ վանքերի ընդհանուր և երևմտից տեսչությունը, միաժամանակ որպես կրթական տեսուչ ղեկավարելով Յաֆայի հայոց Ս. Գլխադրի վարժարանը, ուր բարձր դասարաններին դասավանդում է գրաբար և քրիստոնեական։

1948—1959 թվականներին նշանակվում է Երուսաղեմի Հայոց Պատրիարքության ներկայացուցիչ Իսրայելում։

Հոգեշնորհ Տ. Բաբգեն վարդապետը իր տեսչության տարիներին ծավալում է կրթական, մշակութային, շինարարական բեղուն գործունեություն, մեծապես սիրվում իր ժողովրդի կողմից և ըստ արժանվույն գնահատվում վանական իշխանության կողմից։

Տ. Բաբգեն վարդապետ Ապատյանը, իր վարչական ծանր պաշտոնավարության երկար տարիներին, զբաղվում է նաև գիր ու գրականությամբ, ուսուցչական ու թարգմանական աշխատանքներով։ Նա աշխատակցում է «Սիոն» ամսագրին, ուր ստորագրում է բովանդակալից հոդվածներ՝ փիլիսոփայական, կրոնական, մատենագրական հետաքրքիր թեմաների շուրջ։

1958 թվականի հոկտեմբերին Տ. Բաբգեն վարդապետը առաջին անգամ ուխտի է գալիս Մայր Աթոռ Ս. Էջմիածին և Մայր Հայրենիք, ներկա լինելու Վեհափառ Հայրապետի հոբելյանական հանդիսություններին։

1959 թվականի մայիս ամսին նշանակվում է Հայրապետական պատվիրակ Հարավային Ամերիկայի Հայոց։ 1959 թվականի մայիսի 10-ին եպիսկոպոս է ձեռնադրվում Մայր Տաճարում, ձեռամբ Աղգիս Վեհափառ Հայրապետի։

Նորապսակ Տ. Բաբգեն սրբազանը հայ եկեղեցականության պատրաստված և նվիրյալ հոգևորականներից է, լի եռանդով և հավատով՝ սրտագինս ծառայելու մեզ Ս. Եկեղեցուն, հայ ժողովրդին։ Նա գտնվում է իր ուժերի ծաղկման և գործունեության հասուն շրջանում։

Տ. Բաբգեն սրբազանին սրտանց բարեմաղթում ենք նորանոր հաջողություններ, իր առաջ նոր բացված ազգային-եկեղեցական ընդարձակ ասպարեզում և վստահ ենք, որ նա որպես խոհուն, լուրջ ու հավատավոր հոգևորական, իր բարեմույն բնավորությամբ, քաղցր հոգով, կարդարացնի Վեհափառ Հայրապետի բարձր վստահությունը և իր ժողովրդի սերը։